

# ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

---

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 5

15 Յունիս 1895



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԵԼԷԿԵԱՆ

Պատվւ Ար Ճատուէտի Թիւ 20

1895

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1 Վարդապետութիւն ԺԲ. Առաքելոց — Ս.Վ.Ն
2. — Կրկնարան նմանաձայնութիւնք ճին հայերնի մեջ.  
Յ. Վ. Միւսխիշվիլի
3. ՎԱՐԴ Ս. ՄՈՆԻԲԱՅԻ — ՅՈՎՀ. Վ. ԱԲԷԼԻԱՆ:

# Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

---

Վեցերորդ Տարի

Թիւ 5

15 Յունիս 1895

---

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԺԲ- ԱՌԱՔԵԼՈՅ

ԿԱՄ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՎՔ Դ ՀԵԹԱՆՈՍԱ

Շարունակութիւն (Գ)

Գ.

Վարդապետարանիս հնութիւնն

Յունարէն 'ΕΝΕΡΓΗΜΑ բառին ոյժն

Յայտնի է որ որչափ աւելի հին ըլլայ Վարդապետարանս՝ այնչափ աւելի մեծ կ'ըլլայ իր յարգն. առ այս ո՞ր ուսումնասիրած է սոյն մատենիկն՝ ջանադիր եղած է միշտ յիշել մի առ մի այն մատենագիրքն որք Վարդապետութիւնս յիշատակած են, եւ կամ մէջէն հատուած մը յտռաջ բերած: Վարդապետարանիս վրայ առաջին խօսողն է Եւսեբիոս պատմիչ. իսկ քան զնա հընազոյն յիշատակողքն են՝ Կղեմէս Աղեքսանդրացի, Բարձրաբայ

---

(Գ) Տե՛ս Պատկեր Զ. Տարի Դէ- 4:

կոչուած թղթոյն գրողն, եւ Հերմայ Յիշատակելոց երկրորդին (Բառն. Թուղթ). ԺԻ.—Ի գլխոց մէջ կը տեսնեմք Վարդապետարանին առաջին մասն յաւելուածով եւ յապաւմամբ եւ կարգաց փոփոխութեամբ զազափարուած: Դ. գլուխ Ծ, Վարդապետարանին ԺԶ գլխէն մաս մ'ունի: Արդ՝ եթէ այդ թղթոյն գրութեան բուն տարիքն հնար ըլլայ գտնել՝ Վարդապետարանին հընութեան չափն որոշել ղիւրին կը լինի Վասն ղի ապահով ենք եւ ղիւրաւ կրնանք ապացուցանել՝ թէ Մատենիկս քան զայդ յիշեալս հին յիշատակարան մէ: Դարձեալ մեր ըսելիքէն յայտնի պիտի ըլլայ՝ որ այս կրկին գրուածք մի եւ նոյն ազգիս բխումն չեն, այլ իրարմէ հոսած, մին միւսէն:

Առ այս Բառնաբայ թղթէն քանի մը խօսք յիշատակեմք աստէն, Վարդապետարանէս քաղուած լինելն ցոյց տալու մտք:

ԺԹ գլխոյն մէջ առ Աստուած սէրն ըստ իւր կերպին աւետարանելէ յետոյ կը կցէ.

իցես պարզ սրտիս եւ առաստ հոգւով,  
Մի՛ ընկերացիս ընդ որոց գճանապարհ մանու գնան,  
Ատեացես զամենայն որ չիցէ հաճոյ Աստուծոյ,  
Ատեացես զամենայն կեղծաւորութիւն,  
5. եւ մի՛ բողցես զպատուիրանս Տէառն,  
Մի՛ բարձրացուցես գրեգ,  
Այլ իցես խոնարհ յամենայնի,  
Մի՛ խնդրեսցես վասն անձին փառս,  
Մի՛ առցես խորհուրդ չար ընդդէմ մերձաւորի քո,  
10. Մի՛ տացես յանդգնութիւն անձին,  
Մի՛ պառնկեսցիս, մի՛ շնայցես, մի՛ ապականեսցես զսր-  
դայս. եւ այլն:

Առաջին ասացուածն Վարդապետարանին ասացուածոց հընութեանն ամենեւին չունի. երկրորդն՝ Վարդապետարանին Դ. 15 տան երբայական տնայողածոյն աղաւաղումն է: Կենաց ճանապարհին վերջին խօսքն (Վարդ. Դ. 15)՝ աստ երրորդ եւ չորրորդ համարներու մէջ մտած են: Վեցերորդ համարովն նորէն յիշեալ տան կը դառնայ, ուսկից երրորդ համարն զազափարած էր. առաջին համարն կ'օրինակէ եւ եօթներորդ տողին մէջ չորրորդ համարն կ'ամփոփէ ըստ իւր սովորական ձեւոյն փոփո-

խելով. (Վարդ. Գ. 14, 15): Ութերորդ տողիւ վեցերորդին ի-  
մաստն կը կրկնէ այլ բառերով. իններորդովն Վարդապետարանի  
Բ. 6. խօսքն կը քաղէ. տասներորդաւն երրայական տան դառ-  
նալով՝ երկրորդ համարն կ'առնու. որով բան չթողուր զուրաւ  
Մետաքսներորդ տողիւ Վարդապետարանին Բ, 2, զլսոյն այլ  
կարդաւ. չարած մեղքերէն երեքն կը յիշատակէ. Բառնաբայ կո-  
չեցեալ թղթոյն հաւաքօղն բոլոր ընթացքն այս կերպով կը հա-  
տանէ. միշտ խեղճուկ ընտրութեամբ. ԺԹ. 6. քանի մը խօսք  
կրկնուած են. Մահու ճանապարհին նկարագրաւն բաց 'ի մի  
քանի համառօտ յաւելուածներէ՝ Վարդապետարանին կը հե-  
տեւի. որով աւելի կանոնաւոր է խօսքն. սակայն հետեւանքն կը  
պակսի. Վարդ. Ե. 5. յորում մկրտութեան ակնարկն չէ կրցեր  
ըմբռնել. Բառնաբայ կոչեցեալ թղթոյն տեղափոխութիւնքն  
Առաքելոց Սահմանադրութեանց է զրոց մէջ չերեւիր. այլ կար-  
գաւ՝ յարասութիւնն հնազոյն յիշատակարանէն զոր ունիմք 'ի  
ձեռին՝ կը քաղուի:

Թուի մեղ՝ թէ Բառնաբայ կոչեցեալ թղթոյն տրուած առաջ-  
նութեան պատիւն՝ ինչպէս կը տեսնեմք Առաքելական Հարց  
տպագրութեան մէջ, չէ ուղիղ, մեր կարծեաց կը նպաստէ Վար-  
դապետարանաւ:

Վարդապետութեան մի հատուածն իր հնութեանն բաւա-  
կան վկայութիւն կրնայ տալ, եւ նոյն իսկ իր պարունակօւ-  
թիւնն կը լուսաբանէ. Այս հատուածն է երրորդ զլսոյն վերջին  
խօսքն, աստ աւելի պայծառ լինելու համար նախորդ բանից հետ  
յառաջ բերեմք.

12. Այլ հեգ լիւ, գի հեգք ժառանգեսցեն գերկիր:

13. Լեր երկայնամիտ եւ ողորմած եւ անմեղ եւ հանդարտ  
եւ բարի, եւ երկիւղիւ գրանս միշտ գոր լուար:

14. Մի՛ բարձրացուցես գրեգ եւ մի՛ տացես յանձն քո  
գօրութիւն.

15. Մի՛ կցեսցի անձն քո ընդ ամբարտաւան, այլ ընդ  
արդարս եւ ընդ խոնարհս գնացես:

16. Զհասեալս քեզ զյաջողութիւնս ընկալցիս 'ի բարիս,  
գիտելով գի առանց Աստուծոյ չի ինչ:

Վերջին տան գհասեալս 'ի քեզ զյաջողութիւնս (energimata)

մեծի ուշադրութեան արժանաւոր է. յաջողութիւն եւ յաջողել  
կը կարգամբ Պաւղոսի առ Ա. Կորըն. ԺԲ, 6, 10, 11, բնու-  
թենէ վեր գործ մ'ըսելու համար։  
Այս բառ ճշգրտութեամբ կը նշանակէ 'ի յունին՝ ներ-գործել. ո-  
րով ոչ պարզ գործն' այլ 'ի ներքս ազդելն է. եւ հայերէն կըր-  
նայ նախգրիւ արական կամ նախգրիւ վերջահոգով կամ գործիա-  
կան զրուիլ, Զ'ի քեզ հասեալ կամ կատարեալ գործս լնկալցիս  
. . . եւ կամ լաւ եւս՝ սեպհական յաջողութիւն բառին՝ ինչ-  
պէս թարգմանած եմք։ Յունական սոյն այս բառ Պաւղոսի թըղ-  
թոյն մէջ քիչ անգամ՝ իսկ սոյն բառիս սյլ ձեռքն շատ անգամ  
գործածուած են. նոյնպէս նոր Կտակարանին միւս մասանց մէջ  
եւս. Մատթ. ԺԴ. 2. — Մարկ. Զ. 14. — յորս հայերէնն կ'ըսէ՝  
գորութիւնը լինին նույն, իսկ Յակ. Ե. 16. գորաւոր են։ Պաւ-  
ղոսի բոլոր այլ տեղերն՝ Աստուծոյ անմիջական կերպով 'ի մեզ  
ազդեցութիւնքն կը յայտնեն։ Ա. Կորընթ. ԺԲ. 6. յունարէն  
այդ բառն՝ յաջողել, յաջողութիւնը են. երբ բաժինը յաջողու-  
թեանց են՝ այլ Աստուծոյ նոյն է, որ յաջողէ զամենայն յա-  
մենայնի. զարձեալ 10, Անդ. այլուս յաջողութիւնը. եւ 11 հա-  
մարտի՛ւն՝ այլ զայս ամենայն յաջողէ մի եւ նոյն Հոգի. Նոր  
Կտակաց մէջ սոյն յունական ներգործել բայն եւ Գործ բառն  
ոչո՛ն ըստ իմաստին կը տեսնուի. որ երբ յաստուծուած է՝  
հրաշք է եւ սրանցելիք։ Այսպէս Մատթէի ԺԱ, 2, կը կարգամբ.  
գործան Բրիստոսի. եւ Դուկ ԻԴ, 19, հօք սրդեամբ, եւ Յովհ.  
Թ. 3. գործքն Աստուծոյ. Է. 21. գործ մի գործեցի. եւ այլն։  
Գործ կը նշանակէ նաեւ շնորհք. Փիլիպ. Ա. 6. Որ սկսաւն 'ի  
ձեզ զգործս բարեաց. եւ շնորհօք կատարուած գործն, Կորնս,  
Ա. 10. Յամենայն գործս բարութեան պտղաբերք եւ անեցունք.  
Առ այս Առաքեալն սոյն յունական enérghima բառն կը վարէ  
Աստուծոյ 'ի մարդում կատարածն յայտնելու համար, ինչպէս է  
շնորհն, Ա. Կորընթ. ԺԲ. 4. 9, 28, 30, 31. (1)

(1)Շնորհք բառն վարդապետարանիս մէջ ալ գործածուած է.  
Նոր Կտակարանաց մէջ Հոգւոյն սրբոյ ներքին եւ արտաքին  
տուրքն կը հասկընայ շնորհք բառիս. ինչպէս Հռովմայեցոց  
բղբոյն մէջ կը տեսնուի ըստ սուաջին իմաստին, եւ ըստ երկ-  
րորդին՝ Կորնթացոց Ա. բղբոյն մէջ, Բնական եւ գերաբուն  
տրից առհասարակ իմաստիս հազուադէպ է. Բ. Կոր. Ա. 11.  
Վարդապետարանս կ'ըսէ. Տաւր ուգոյին եւ մի՛ պահանջել յե-

Առաքելական Հարց դրոյ մէջ միայն 'ի թղթին Բառնարայ հաղիւ երկու անգամ սոյն այս յոյն բառն կարողացանք գտնել. զլ. Ա, 7, հնոյն օրինաց մարգարէութեանց կատարումն նշանակելով. եւ Բ, 1, չար ոգւոյն գործոց վրայ խօսելով նոյն բառիւ:

Ծիրանաւորին Sirletoի տպագրած Rossano ձեռագրին յուսական հնագոյն սլաոնարադամատուցին մէջ, զէնի Առեք կերպրէ կը կարկամք Հալւոյն Սրբոյ կոչումն յճնայն, այսպէս. Պարզն բնութեամբ, յիւն յաջողութեամբ (enérgeia), աստուածային շնորհաց աղբիւրն: Երրորդ խօսքն յաջողութիւն բառին սլարղաբանութիւնն է:

Ուստի Վարդապետարանս կ'ըսէ. Մի' բարձրացուցես գրեզ եւ մի' տացես զօրութիւն յանձն քո: Մի' կցեսցի անձն քո ընդ ամբարտաւանս, այլ ընդ արդարս եւ ընդ խոնարհս գնացես: Զհասեայ 'ի րեզ գլաշողութիւնս՝ ընկալցիս 'ի բարիս, (բարեւորութիւն), գիտելով զի ոչ ինչ է առանց Աստուծոյ: 'ի բարիս բառն ամենայն տուրք բարիք բացատրութեան համեմատ է. այդ բարեօք ճոխանալով չէ սլարտ հպարտանալ:

Ասկայն գուցէ յանդգնագոյն թուի ոմանց մեր այս կարծիքն, քննեմք սովորական թարգմանութիւնքն. Զհասեայ 'ի րեզ գլաշողութիւնս սողն կրնամք յեղուլ նաեւ

Զգործս 'ի րեզ գործեայս  
Իբրեւ զբարիս ընկալցիր, գիտելով  
Երբ ոչ ինչ լինի առանց Աստուծոյ:

Ոմանք թարգմանութեան մէջ Զգործս (չարչարտեաց կամ նեղութեանց) կը յաւելուն, եւ կամ գալղոսիկ գերանունն, եւ

ուրս, վասն զի՝ Ամենայն հատեալսն ինչ յիւր շնորհաց Վարդ. Ա. 12: Թեւոյ կը նշանակէ Աստուծոյ սեպնական. զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն սլարգեք կատարեայք 'ի վերուստ եւն, յԱստուծոյ միայն, որ Հայրն է Հաւատացիդոց, որոց մէջ անապականն հասարակաց լինելով՝ որչափ առեղի ապականացորն. ինչպիս կը յիշատակէ Վարդապետարանս: Որով յայտնի է քի աստ շնորհս բառն ընդարձակ իմաստիւն է, բարեւորութիւն, որ եւ իցի. իսկ յաջողութեան առեղի սեղմ իմաստիւ. չեւորեալ է, վասն զի գեորնական աստուածային գործոց արդիւնքն կը յայտնէ:

կը կարդան. — Զգործն ջարեաց որ հասանեն քեզ քնկալջիր իբրեւ գբարիս: Սակայն այդ յաւելուածիւ թարգմանութիւնն չփոխուիր, վասն զի իմաստին մէջ առանց յաւելուածին հարկ մնալու կը տեսնուի այդ բառ: Սակայն մեր կարծեաց հակառակ է գործեալս կամ եղեալս կամ հասեալս բառն ջարիք՝ ջարջարանք՝ եւայլն, թարգմանել, քսնի որ Առաքեալն ճիշդ նոյն յունական բառն կրկին անգամ միայն դործածելով՝ դոր մեր Ս. Հարք յաջողութիւն կը թարգմանեն՝ Շնորհաց իմաստիւ կը վարէ: Դարձեալ այդ թարգմանութեամբ այնպիսի խօսք մը կը ձեւանայ՝ որ վարդապետարանին այդ սեղանին չյարմարիր. վասն զի ուժգին կերպով խոնարհութիւն եւ հպարտներէն հեռանալ եւ պանծն չբարձրացունել հրամայելէ յետոյ՝ վերջաբանն այդ վրձնով կը հիւսէ: Յայտնութիւն կը նշանակէ Աստուծոյ ՚ի հաւատացեալս ներգործող կարողութեան արդիւնքն. ինչպէս Առաքեալն ինքնին կը վկայէ. Աստուած է որ յաջողէ զամենայն (գլխաջողութիւնս) յամենայնի. այսինքն յամենայնի՝ որք աստուածային այս ներգործութիւնն կ'ընդունին, որոց մարդ ինքեամբ չէր կարող հասու լինել. որ է ըսել՝ Գլխացեալ զի առանց Աստուծոյ ոչինչ լինի: Գլխացեալ՝ այսինքն իմանալով, զգալով, տես Գործք. Բ. 27. — Ժ. Գ. 35, 36, 37. Այդ գլխացեալն՝ յաջողութիւն բառին լուսատուն է. իսկ գերանունն յաւելորդաց է: Առաքելական Սահմանադրութեանց եօթներորդ գլխին վարդապետարանիս յարստութիւնն է, ամեն տողին յաւելմամբ կամ յապաւմամբ, փոփոխելով, զարդարելով. այնպէս զի չատ ընդարձակուած եւ չատ փոխուած է: Ը գլուխ 7 նոյն գրոց՝ կը կարդամք. Հասեցոց ՚ի քեզ վշտաց տար երկայնամիտ, եւ վնասուց սնորսունջ, գլխացեալ զի վարձ փոխարինին յԱստուծոյ տացի քեզ որպէս Յովբայ եւ Ղազարոս: Վարդապետարանէ քաղուած մասն յայտնի է. Հասեցոց ի քեզ (վշտաց) . . . գլխացեալ զի. Վարդապետարանիս յաջողութիւն բառն աստ վրշտաց եղած է, որով իմաստն բնաւմբ փոփոխած: Սոյն Սահմանադրութեանց վիշտ բառէն հետեւցունելով՝ Վարդապետարանիս յաջողութիւնքն՝ ջարիք կամ ջարջարանք թարգմանել՝ օրինաւոր չէ. ընդհակառակն՝ ուղիղ իմաստիւն եւ ըստ մերոյս մտաց ըմբռնելու օրէնք եւ պատճառ: Վասն զի այդ ազգարար ծանուցումն եւ ոչ իսկ երկրորդ դարուն առաջին կիսուն այլ եւս կրնար տրուիլ Երախայից՝ ուր մնաց աւելի յետոյ, յորում Առաքելական Սահմանադրութիւնք (է գլխին) դրուած են: Առ

այդ՝ ինչպէս ուրիշ տեղեր ըրած է՝ հին վճիռն փոխելով վշտաց  
եւ չարչարանաց համբերութեան յանգելը է։ Կ'երեւի թէ Առա-  
քելոյն խօսքն յիշած է, Հռոմ. Ը. 28. յորում կ'ըսէ թէ նեղու-  
թիւնք յԱստուծոյ են 'ի մեր օգուտ. զի Որոց սիրեմն գնատ-  
ուած՝ յամենայնի գործակից լինի 'ի բարիս։

Վարդապետարանիս սոյն վճիռն յիշած է նաեւ Որոգենէս.  
այսպէս ըստ լատին թարգմանութեան. Այսր աղագաւ վարդա-  
պետեն գմեզ աստուածային գիրք՝ զամենայն հասեալս 'ի մեզ  
որպէս յԱստուծոյ բնդուենէլ, գիտելով զի ոչ ինչ լինի առանց  
Աստուծոյ. Աստուծոյ թոյլտութեան վրայ կը խօսի անդէն՝ որով  
չար սգիք կրնան փորձել զմարդ, ինչպէս Յոբայ զորոց մէջ կը  
տեսնուի. Աստուածային գիրք ըսելով Որոգենէս անկասկած  
եմք թէ Առաքելոց Վարդապետարանս կը հասկանայր եւ ոչ  
Բառնաբայ թուղթն՝ եւ զոր կը յիշատակէ եւս իր զործոց 4 հա-  
մարաւ. բայց այսու չհետեւիր՝ թէ Որոգենէս տուած մեկնու-  
թեան իմաստն ունենայ սոյն հաստուածս, վասն զի աւելի մեկ-  
նողական կերպով քաղուած է այդ խօսքն 'ի Գրոցս քան բաւ  
առ բառ 'ի վկայութիւն, ինչպէս յայտնի է։

Առաքելոց Կանոնաց ԺԱ., 3—6, եւ Բառնաբայ թղթոյն  
ԺԹ., 6—7, համարներու վրայ խօսել հարկ չէ. զի անդ Վար-  
դապետարանիս խօսքն փոփոխուած է բոլորովին։

Առաջինն Նաթանայելի կ'ընծայուի, նախ քան Առաքելոց յի-  
րերաց բաժանմամբ քարոզութեան սկսելն։ Երկրորդն՝ յորում  
յաջողութիւն բառն իր իմաստն ճիշդ պահած է ըստ Վարդապե-  
տարանիս. զի՝ թէ բառական նմանութիւնն ունի, եւ թէ ինչ-  
պէս ոմանք կը համարին՝ երկրորդ դարուն առաջին կիսուն զըր-  
ուած լինելով այդ թուղթ՝ աստուածային գործք (յաջողութիւնք)  
կամ շնորհք՝ թէպէտ եւ առհասարակ չէին, սակայն եւ ոչ իսկ  
բոլորովին պակասած։

Ուրեմն ընդունելով՝ զի Վարդապետարանիս մէջ զործած-  
ուած յաջողութիւն բառն դերբնական տուրքն նշանակէ, Երա-  
խայից առջեւ պարզութիւն աղբ մը կը լինի. ինչպէս յայտնի է  
է գլխոյն առաջին բառերէն. Պատուիրելով զայս ամենայն մկր-  
տեցեք, Որով աստուածային ամաստութիւնն կը յիշեցունէ՝ նո-  
րածին Եկեղեցւոյն մէջ, ուր նորակնունք ձեռնադրութեամբ  
Հոգւոյն պարգեւքն կ'ընդունէին. ինչպէս Առաքեալք Հոգեզա-

ըստեան օրն: Պարզեւք՝ որ ներքին չնորձաց առատութեանն էին յայտարարք, եւ որով անհաւանք կը զրդէին 'ի հաւատս զալ: Եկեղեցւոյ սոյն վիճակն Գործոյ եւ Առաքելոց թղթոց մէջ յայտնի կը կարգամք. Գործք ԺԹ. 6. Եւ 'ի զնեյ 'ի վերայ նոցա Պատրոսի զճեռն՝ եկն Հոգին սուրբ 'ի վերայ նոցա. խօսեին լեզուս եւ մարգարեանային: Նոյնպէս Կռնեւելայ հարիւրասպետի եւ այլոցն. որք նախ քան զմկրտութիւնն լցան Հոգւով Ժ. 44. 45. Հանգեաւ Հոգին Սուրբ 'ի վերայ ամենեցուն: Գործոյ Բ. 17. Պետրոս Յովեւելայ մարգարէութիւնն յիշելով կ'ըսէ. Հեղից յովոյ իմեկ 'ի վերայ ամենայն մարմնոյ. յայտնի է աստուածային աղբեր առատութիւնն եւ յորդութիւնն այս խօսքով. Հին Օրինաց եւ Նորոյ տարբերութիւնն. մինչ յառաջնումն թուով եւ չափով կը տեսնեմք Հոգւոյ զեղումն, 'ի նորումս՝ ի վերայ ամենայն մարմնոյ. Նոյնպէս է եւ 'ի Փիլիպպեայ մկրտեալ սամարացւոցն, որոց վրայ Պետրոսի եւ Յովհաննու ձեռնադրութեամբ Հոգին Սուրբ կ'իջնէ հրեղէն լեզուօք եւ կը մարգարէանան: Պետրոսի եւ Յովհաննու հետ հայցեն հաւատացեալք յԱստուծոյ այս չնորձն, զի կարող ըլլան հաստատութեամբ ըզբան Տեառն քարոզել. Գործոյ Դ. 30. 31. 'ի ձգել զճեռն քո 'ի Բժշկութիւն, եւ նշանս եւ արուեստս լինել անուամբ սրբոյ որդւոյ քո Յիսուսի: Եւ մինչ կային նորա յաղօթս՝ շարժեցաւ տեղին յորում եին ժողովեալ, եւ լցան ամենեքին Հոգւով սրբով. եւ խօսեին զբանն Աստուծոյ համարձակութեամբ: Այս էին Առաքելոց յաջողութիւնքն (գործքն). զայս կը տեսնեմք 'ի Ստեփանոս, այլ լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր նշանս եւ արուեստս մեծամեծս 'ի ժողովրդեանն. նոյնն ունիմք Փիլիպպոսի համար: Տես Գործք, Բ. 43. Թ. 33. Զ. 8. Ը. 7, 8. եւ այլն:

Կորնթիացւոյ Ա. թղթովն (ԺԴ) անկումն կ'ըսիսի սոյն պարզեւաց: Վասն զի հաւատացելոյ մէջ ունայն խորհրդով մը Առաքելոց նմանութեան վիճակ՝ լեզուաց չնորձն քան զմարգարէութիւն աւելի բարձր կը դասուէր. աւելի Հոգւոյն սրբոյ արտաքին չնորձի. զարդարուն արտաքուստ երեւել կը յանկային, քան 'ի ներքուստ սիրով լի սրտի անձկալու. (Անդ. ԺԳ). եւ սակայն այն արտաքին չնորձ՝ ներքնոյն յորդութեանն նշանակք էին, որով նորածին Եկեղեցւոյ ծնունդք կը ճոխանային Մկրտութեամբ եւ ձեռնադրութեամբ: Նոյնն Ա. Թեաղ. Ե. 19. 20. 21. Զնոգին մի՛ շիջուցանէք: Զմարգարէութիւնս մի՛ արհամար-

Յեր: Զամենայն ինչ փորձեցէք, գրարիւն ընկալարուք: Այս վճիռք՝ Առաքելոյն ընդ երկար սլատճառաբանութեանց հետեւութիւնք ըննեն:

Ամենեւին չիք տարակոյս զի Աստուած միշտ այս հոգեւոր սուրբն եւ պարգեւք չնորհած է եկեղեցւոյ. ինչպէս որ Ս. Եւրանոս կը վկայէ. սակայն իր խօսքն Վարդապետարանիս նման առհասարակ եւ կանոնաւոր վիճակ մը չյատենիր. Զլաշողութիւնս 'ի քեզ հասեալս իբրեւ գրարիս ընկալջիր: ԺԱ. զլուխն որ մարդարէիւք կ'ըզբաղի՝ մեր այս խօսքն կը հաւաստէ՝ զոր յիշուով աեղւոջ կը տեսնենք: Հնութեան խնդիրն Վարդապետարանիս ամեն մասանց մէջ լուսաւոր երեւելով, մեր դատաստանն չենք փութացուներ. հետեւեալ զլուխներով ընթերցողն քայլ առ քայլ այնպէս պիտի համոզուի, զի հակառակ եւ ոչ ինչ չտեսնելով՝ 'ի նպատ մեր առաջարկութեան պիտի վճռէ՝ սրտազիր:

Շարայարեյի

Ս. Վ. Ն.

## Կրկնաբան Նմանաճայնոցքիւնք

### ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԷՁ

Նմանեցուք առանձնագործ գործոցն մեղուի (Ս. Բարս. Ճառ Ը, 165):

Աներկբայ է յաչո արդարապատ բանասիրաց՝ թէ մեր նախնեաց մատենագրութիւնք ամենահարուստ բովբ մը կ'ընծայեն՝ վայելուչ դարձուածներու, հայկաբան ոճերու եւ նոյն իսկ ընտիր բառերու: Հերիք է մտադրութեամբ դանոնք կարգացած ըլլալ՝ նոյներուն մէջէն յերեւան հանելու համար ոչ իբր ծածկաթաղաց զանձէ մը այնպիսի դանազան ճոխ ստացուածներ, որք յիրաւի պարծանք են մեր զրականութեան:

Եթէ հնարաւոր չէ՝ մեզի այսօր ականջալուր լսել մեր հին մատենագրաց բերնէն ելած այն սքանչելի բարբառն ու հիացմամբ դարմանալով զուցե՛լ Քիրթողահօրն Հովհրոսի հետ . . . «Ճարտար խօսնակն յարեաւ Նեստոր քաղցրաբարբառ»,

«Յոյր 'ի լեզուէն քան զմեզր անոյշ ծաւալ ծորան բանքն հոս էին» (Հով. Իւ. Ա., 9).

սակայն կրնանք զոնէ վկայ ականատես ըլլալ, երբ ձեռուր նիս ունինք այն իրենց ոսկեղինիկ գրեաւքն՝ որոնց աննման ճոխութեան ու վսեմութեան ոչ ոք սակաւին հասած հաւասարած է ցարդ, թող թէ զերազանցած: Եւ ասոր ալ լուսն ու գըլխաւոր պատճառն ըստ մեզ այն եղած է՝ որ առ հինն մեր գըլխաւոր հայերէնը մի միայն կենդանի խօսուն բարբառն էր. մինչդեռ մենք այսօրուան օրս լեզուի երկուսութիւն ունենալով՝ խօսուած աշխարհիկ եւ չխօսուած գրոց բարբառ՝ ոչ սակաւ խոչընդոսներու կը հանդիպինք, որոնցմէ անշուշտ զերծ էին մեր նախնիք:

Նպատակնիս այս սողերը գրելու ժամանակ այն եղաւ՝ ըստ օրինակի օտար ազգի սիրաբանից՝ ներկայացընել մերադէտայ ընթերցասիրաց ծաղկաքաղ հատընտիր փունջ մը մեր սոհմային բարձր թողի եղած մատենագրական ճոխութիւններէն: Զենք սարակուսիր որ սոյնպիսի վայելչաբան ասացուածոց ազդեցութիւնն ու օլուտը մեծ կ'ըլլայ նոյն իսկ արդի հայերէն լեզուին վրայ՝ ճոխացընելով զայն բնիկ հայեցի ոճերով ու պէսպէս զարծուածներով, եւ միանգամայն եւս քան զեւս կոկելով խօսուած աշխարհիկ բարբառը:

Սակայն ուզելով ամփոփել մեր ձեռնարկած հետազօտութեանց չըմանակն ու պարզել զիտաւորութիւննիս՝ կը յաւելումք թէ միայն կրկնաբան նմանաձայնութեանց կամ որ նոյնն է՝ նմանաձայն կրկնաբանութեանց վրայ խօսիլ է մտքերնիս: Անտարակոյս քննասէր աչքէ մը չխուսափիր ասոնց չքնաղ գեղեցիկութիւնն ու հեշտալի ներդաշնակութիւնը. միանգամայն քաջածանօթ է իրեն՝ թէ որպիսի կարեւոր դեր մը կը խաղան անոնք մեր լեզուին կազմութեան մէջ. այսու հանդերձ պէտք է կարծել թէ սոյնպիսի նմանաձայնութիւնք լոկ զիպուածական պատահարներ ըլլան. վասն զի այն կրկնաբան բառերուն զիտմամբ քովէ քով կարգաւորութիւնն եւ կամ նոյնանշան անուանոց աստիճանաւոր շարքը թէ՛ ականջին համար քաղցրահնչիւն ձայնակցութիւն մը յառաջ կը բերեն՝ եւ թէ խօսքին աւելի ազդեցիկ գօրութիւն կուտան: Բանի մը օրինակներ՝ քաղեալք՝ 'ի մատենագրութեանց նախնեաց մերոց՝ բաւական օրինակ ըլլան ընթերցողն համոզելու ըսածներնուս ճշմարտութեանը:

— «Ազոխն ծաղկեսցէ ծաղիկն ազոխացեալ» (Եւ. Ժ. Բ., 5):

- «Գործեսցէ զգործ իւր գործ դառնութեան» (Անդ. ԻԸ, 21)։
- «Աստուածագործ սրանցելագործութիւնքն գործեցան»  
(Կորնթ. 23. Լ Ագալ. 581)։
- «Ձատունգտներ գործել զգործ նաւագործութեանն» (Եւս.  
Քրիստ. Ա., 33)։
- «Չարագործքն քեպեաւ եւ զգործ չարագործութեան գործեան» (Եղեկ, 61)։
- «Չերն ճիւղն վասն ճիւղն յաշտ սոռնէր» (Անդ., 131)։
- «Ձօրացուցանէ գանգօրս մեծագօր գօրութեամբ» (Անդ., 8)։
- «Զի ածն 'ի ջգոյէ 'ի գոյ զջգոյսն, եւ եցոյց յոջնջի լինջ գջեան» (Անդ., 7)։
- «Յոջնջէ գանիմբսն լինջ ածել» (Ագալ. 83)։
- «Առ. 'ի կեալ գկենդանիսն՝ եկն կենդանաբարն» (Անդ., 356)։
- «Կուսանն կուսութեամբ ստանալ գկուսութեան պսակ»  
(Յովհ. Մանդ. 23)։
- «Է ախսանել գբագումս բագում անգամ 'ի բագում տեղիս» (Եղեկ, Ե, 171)։
- «'Ի խաւարային ժամու գխաւարային կերակուրս խաւարային մարմնոյս տացուք» (Անդ. 366)։
- «Զգեստ կարճագգեստ գգեցցի» (Զգեմ. Տառ ԺԸ, 389)։
- «Կարգեցին կագմեցին կանոնեցին յօրինեցին» (Փառաւոր. Բարդ. Գ, 76)։
- «Այլ ներքինի՝ չարախիտ չարախորհուրդ չարագործ»  
(Անդ. Գ, 47)։
- «Ըստ օրինակի մարտիկ երիվարացն մարտ եղեալ ըզմարտկաց կիտան կոռիւն» (Ս. Բարս. Տառ Գ, 67)։
- «Զմալսն մեղերն մոմակերտ գործով շինեալ . . . գմով մաղուցն 'ի ծաղկաբեր մարգացն մեծաւ փութով ժողովէ»  
(Անդ. Տառ Ը, 165)։
- «'Իատեն դաստապարտեալք գղատաւորն» (Ս. Եղբ. Բ. 351)։
- «Ծնաւ. անծինն գծնունդն» . . . «կենդանականն՝ կենդանի կեանս ծնաւ» (Սեբեբ. Տառ Ա, 8-12)։
- «Լեմուտ ընդ չարչարանօք անչարչարելին չարչարելեան» (Անդ., Տառ Բ, 23)։
- «Փայլակն գփայլակն բախէր, որոտումն որոտման պա-

սումներ, կայծակումք զկայծակունս սախպէին» (Ս. Եփ. Դ, 119)։

— «Որ երբեմն յայնպիսի կարծիսն կարծեօք կարծեալ ի-  
ցեն» (Կ. շ. ԸՆԺ. Զ, 119)։

Այս քանի մո օրինակները թէպէտ բաւական որոշ դադա-  
փար մը կուտան առ նախնիս մեր զործածուած կրկնաբանու-  
թեանց, սակայն աւելի բացայայտ կանոնաւորութեան համար  
չորս զանազան տեսակներու կը վերածենք զանոնք. նախ՝ նը-  
մանաձայն բայք իրենց արմատովքն հանդերձ, երկրորդ՝ զոյա-  
կան անուանք իրենց յարակից ածականներովն, երրորդ՝ կրկ-  
նաւոր բառք եւ վերջապէս Մ գրով կազմեալ կրկնութիւնք։ Ա-  
սոնց իւրաքանչիւրին վրայ առանձինն պիտի խօսինք հետեւեալ  
հաստատանքուն մէջ։

#### Ա. Կրկնաբան նմանաձայնութիւնք բայից իրենց արմատոցն հետ

Հասարակաց ժողովրդեան բերանն յաճախ կը չրջին հե-  
տապայ բնական կրկնութիւնք, գիր գրեյ՝ գործ գործեյ՝ երգ եր-  
գեյ՝ խօսք խօսիլ՝ շէնք շինել՝ պատմութիւն պատմել, եւայլն,  
որք ինչպէս պիտի տեսնենք ոչ միայն սամկաբանութիւն ըլլալէ  
հետո՛ւ եւ, այլ մանաւանդ բնիկ հայկարան ասացուածք են՝ մեր  
հին նախնեաց ընտիր մատենագրութեանց մէջ առհասարակ  
գործածուած։ Ուստի յայտ փափաքելի է՝ որ սոցնպիսի վարկուչ  
դարձուածներուն զոնէ զլիաւորները նշանակուին մեր գրաբար  
բառգիրքներուն մէջ, որպէս զի անոնց կիրառութիւնն եւս քան  
զեւս ընդհանուր ու սովորական գտնեայ նոյն իսկ արդի հայերէն  
գրութեանց մէջ։

Կան երկու տեսակ կրկնաւոր նմանաձայնութիւնք, որք  
մեր չրջանակէն զուրս ըլլալով՝ յիշատակել միայն կ'ուզենք հոս  
խօսքին աւելի ազդեցիկ զօրութիւն տալու համար. մեր հին մա-  
տենագիրք՝ մանաւանդ 'ի Սուրբ Գիրս' շատ անգամ զիմաւոր  
բայերուն կը կցեն իրենց անորոշ դերբայն 'ի գործիական հոլով-  
անթիւ անհամար են օրինակներն. այսպէս, Բազմապատկան  
Բազմապատկեց՝ Լեւել Լեւելի՝ Բեւանել Բեւելի՝ Երանել Երանելի,  
եւայլն. հրդեհմն ալ զիմաւոր ժամանակին քով լուսանորոյ գեր-  
բայը կը գնեն չհոլոված, ինչպէս Բոսանել Բոսանի՝ Ընխանալ  
Ընխանան՝ Դաւել Դաւելի՝ Դաւել Դաւելի՝ Դաւել Դաւելի՝ Դաւել Դաւելի՝

եւայլն Սակայն այս երկատեսակ դարձուածոց տեղ աւելի  
ընտիր ու նախադաս համարուած են ընթաց ընթանա՝ լեւ  
շուր՝ «Եր «Երեմ» Կամ Կրեթոս» քննեմ յընթացին եւայլն, հա-  
յեցի նմանաձայն ասացուածք, որոնց վրայ է հոս խօսքերնիս  
Քիչ անդամ ալ այս զանազան վայելչական ձևերը խառն 'ի  
միասին գործածուած կը տեսնենք. զոր օրինակ, ճնոցա դասի  
պահելով պահեսպէս» (Աղտթ, 614). «Կապահելով պահանջել եր-  
կեր, եւ յապահակութեամբ յապահակել . . . Խառնութեամբ Խառնելոց  
երկեր, եւ Կարակապելով Կարակապել» (Լու, ԻԴ, 3— 19).

Արդ անորոշ զերբայով յօդուող կրկնաբանութիւնները մէկգի  
ղնելով, հոս մի միայն բայից եւ իրենց արմատական անուանց  
նմանաձայնութիւնքն իբր 'ի պատկերի այբուբենական կարգաւ  
կը ներկայացնենք մեր ընթերցողաց՝ քաղելով հանելով զանոնք  
մեր հին ռսկեղինիկ մատենագրաց դրութիւններէն, որքան հնար  
եղաւ մեղի. ճիշդ ու անփոփոխ պահուած են բոլորի զատուո-  
րութիւնք, իսկ դժուարիմաց դարձուածոց իմաստն աշխարհա-  
բար լսացատրութեամբ կը լուսարանենք. նոյնանչան եղած ա-  
սացուածոց ասջուր Տէ՛ւ զնելով՝ մատնանիշ կ'ընենք անոնց  
համապատասխանող բառը. վերջապէս համաոճողութեան հա-  
մար շատ տեղեր բութ զրինք՝ որպէս զի մի եւ նոյն բայն այլ-  
եւայլ անգամներ կրկնելու չտրուակինք:

|                             |                              |
|-----------------------------|------------------------------|
| Ազահեմ զազահութիւն չար      | Աղօթիւք աղօթն առնեմ. Տէ՛ս    |
| Ազատեցուցանեմ ազատութեմբ,   | Կամ յաղօթու                  |
| Ազատիմ ազատութեամբ. Տէ՛ս    | Աճեմ զաճուին (Աստուծոյ)      |
| Փրկիմ,                      | Ամուշեմ ամօթով՝ զամօթ մեծ.   |
| Ազդեցութեամբ ազդ եղեւ (լուր | Ամբառնամ 'ի բարձունս (զաչս,  |
| տրուեցաւ)                   | զճայնս). Տէ՛ս Համբառնամ:     |
| Ախտանամ զախտ. Տէ՛ս Զախտ     | Ամպարչտիմ ամպարչտութիւնս.    |
| եւ. Հիւանդանամ.             | Տէ՛ս Անօրինիմ:               |
| Աճեմ ստուերածն (մթրնցընել)  | Ամբացուցանեմ զամուրս         |
| Աճցի աճելի (պիտի աճիլուի)   | Ամօթով ամաչեցուցանեմ         |
| Ակնարկեմ ակամբ              | Այրեմ այրելիս (կրակով էրել): |
| Ահաբեկեմ յահէ. Տէ՛ս Երկնչիմ | Տէ՛ս Հրկիզեմ:                |
| յերկիւղէ                    | 'Կյրիմ զհրայրեացս (կրակ զառ- |
| Ազաչանօք ազաչեմ. Տէ՛ս Պա.   | նայ)                         |
| զատիմ                       | 'Այցելութեամբ այց առնեմ      |
| Աղիւ. յաղեմ                 | Անգիտանամ անգիտութիւն        |

|                              |                               |
|------------------------------|-------------------------------|
| զանգիտութիւն                 | Արքեպուսական արքեպուսեամբ     |
| Անդամալոյծ լուծանիւմ         | Արդարացուցանեմ զարդարու-      |
| Անիծանեմ անէծս               | թիւնս                         |
| Անիծիւք անիծանեմ . Տէս նը-   | Արժանեմ զարժանս (կնիք զնել)   |
| զովիւք .                     | Արհամարհեմ տրամարհանօք        |
| Անիրաւիմ զանիրաւութիւն տ-    | Արհամարհեմ զարհամարհանս       |
| նիրաւութիւնս                 | Արձակեմ յարձակումս (արձակ     |
| Անմեծար մեծարիմ (չմեծարուիլ) | թողուլ)                       |
| Անուամբք անուանիմ            | Արտասուալից լինիմ արտասու-    |
| Անուանեմ զանուն              | ուօք                          |
| Անուանեմ ըստ անուան զանուն   | Աւանդիմ զաւանդն               |
| Անուանեմ զԱնունն             | Աւարիմ զաւար                  |
| Անուանեմ զանուն Տեառն        | Աւետարանեմ զաւետարան          |
| Անուանեմ յանուանէ            |                               |
| Անպէտ կամ 'ի պէտս            | Բաժանեմ զբաժին՝ բաժինս .      |
| Անցս անցուցանեմ              | Տէս 'ի բաժինս                 |
| Անցք անցին . Տէս Պատահարք .  | Բամբասանս բամբասեմ            |
| Անօրինիմ անօրէնութիւնս . Տէս | Բառնամ զբարձունս՝ զբարձրա-    |
| Ամպարչտիմ .                  | ւանդակս (կուստունները ջնջել)  |
| Աշխատեցուցանեմ աշխատու-      | Բարբանջս բարբանջեմ (ափեղ-     |
| թեամ մեծաւ                   | ցփեղ խօսիլ)                   |
| Աշխարհօք աշխարեմ             | Տէս Բարբառիմ զբարբառ՝ 'ի բար- |
| Աշխարեմ աշխար .              | բառ . Տէս Խօսս եւ ճառեմ .     |
| Ապականիմ ապականութեամբ       | Բարբառով բարբառիմ             |
| Ապխտեմ ապուխտս ապուխտս       | Բարկանամ բարկութիւն մեծ .     |
| Առակաւ առակեմ                | Տէս Արտմտեմ եւ Ցաննում .      |
| Առակեմ զառակ                 | Բարկանամ 'ի սրտմտութիւն       |
| Առաւելով առաւելում (եւելօք   | բարկութեան                    |
| չառնալ)                      | Բարկութեամբ մեծաւ բարկա-      |
| Առնում առիւ (աւար ընել)      | նամ                           |
| Առնում զառ եւ զապուռ (կո-    | Բարկութեամբք բարկացուցա-      |
| ղապուել)                     | նեմ . Տէս Զայրացութեամբ .     |
| Ատելութիւն կատարեալ ատեմ     | Բարձրանամ 'ի բարձունս . Տէս   |
| Ատեմ ատելութիւն մեծ յոյժ     | 'ի վեր .                      |
| Ատեմ զատելութիւն՝ ատելու-    | Բարձրանամ 'ի բարձրութիւն      |
| թեամբ                        | բարձանց                       |
| Արբենամ արբեցութիւն՝ զար-    | Բեկանեմ բեկումն մեծ . Տէս     |
| բեցութիւն                    | կրկինս                        |

|                                 |                               |
|---------------------------------|-------------------------------|
| Բեկմամբ մեծաւ բեկանիմ           | Դատաստան՝ դատաստանս դա-       |
| Բեւեռեմ բեւեռօք                 | տիմ                           |
| Բխեմ զբխումն                    | Դատաստանաւ՝ դատաստանօք        |
| Բնակեմ զբնակութիւն. Տէս         | դատիմ                         |
| Դադարեմ                         | Դատիմ զդատաստան՝ զդատաս-      |
| Բռեմ բռով                       | տանս                          |
| Բռնաշունչ շնչեմ (սաստիկ փչել)   | Դարձուցանեմ զդարձ՝ զդար-      |
| Գայթակղանս գայթակղեմ            | ձուածս (հոք զարձրնել)         |
| Գանձաւոր լինիմ գանձուց          | Դուռնիմ զդուռնութիւն. Տէս     |
| Գանձեմ գանձո՝ զգանձս            | Սոստովանիմ                    |
| Գեղապանծ լինիմ ՚ի գեղ (երև-     | Գեղեմ զեղօք (թուշաւորել)      |
| սաց)                            | Դժուարածին լինիմ ՚ի ծննդեան   |
| Գերեաց զերեղարձ առնեմ           | Դիտեմ զդիտաւորութիւն (դի-     |
| Գերեմ զերութիւն՝ զգերութիւն     | տողի պէս նայիլ)               |
| Գիտութիւն՝ գիտութիւնս ինչ       | Դիւթեմ զիւթութիւն՝ զիւթու-    |
| գիտեմ                           | թիւնս. Տէս Ըղծութիւնս         |
| Գիւտս գտանեմ                    | Դիւրութիւն զիւրեմ             |
| Գլխիվայր զլսարկիմ               | Դրոշմիմ ՚ի դրոշմս             |
| Գնացիւք՝ ցնացս ցնամ. Տէս        | Դրօշեմ զդրօշս. Տէս Քանդակ     |
| Բշխմանամ                        | Երազ՝ երազս յերազիմ           |
| Գնոց ցնեմ                       | Երազովք երազիմ՝ յերազիմ       |
| Գողութեամբ գողանամ              | Երգեմ երգ՝ զերգ՝ երգս՝ զերգս. |
| Գործակից լինիմ գործոց           | Տէս Նուագեմ                   |
| Գործեմ գործ՝ զգործ՝ գործս       | Երդմամբ երդնում               |
| զգործս.                         | Երդմեցուցանեմ երդմամբ՝        |
| Գործեմ զգործուած                | զերդումն                      |
| Գումարիմ զգումարութիւնս. Տէս    | Երդնում երդումն՝ զերդումն՝    |
| իմբիմ                           | երդմունս                      |
| Գրաւեմ էզրաւ                    | Երկեկից կեանս կեամ (երկա-     |
| Գրգիմ զրդանօք՝ ՚ի զրգանս        | կենցաղ ըլլալ)                 |
| (փայփայուել)                    | Երկիր սլաղանեմ ՚ի վերայ երկ-  |
| Դրեմ զեր՝ զգեր՝ ՚ի գեր՝ ՚ի գրե՝ | րի՝ յերկիր                    |
| զգրես՝ ՚ի գիրս                  | Երկնչեմ երկիւղ մեծ՝ զերկիւղ   |
| Դրեմ զրով՝ զրջաւ                | Երկնչեմ յերկիւղէ. Տէս Ահա-    |
| Գօտեւորիմ գօտի՝ գօտիս           | բեկիմ                         |
| Դադարեմ ՚ի դադարս. Տէս Բը-      | Եփեմ եփոյ (կերակուր եփել)     |
| նակեմ                           | Նօթնեւորդեմ իօթնեւորդս        |

|                              |                              |
|------------------------------|------------------------------|
| Ձախտ հիւանդութեան ակտա-      | Հմպեմ գրմպիլի                |
| նամ. Տէս Ախտանամ եւ. Հի-     | Ընդ եղան եղանեմ              |
| ւանդանամ:                    | Ընդելուգանեմ ընդելուգան:     |
| Ձականէ ակն (աչքը կը տեսնէ)   | (խաւ. 'ի խաւոյ հիւսեկ)       |
| Ձայրացութեամբ պայրացուցա-    | Ընթանամ գրնթացս { Տէս Գը-    |
| նեմ. Տէս Բարկութեամբ:        | Ընթացս ընթանամ { նացիւք:     |
| Ձարդարանօք՝ զարդու՝ զար-     | Ընչաթափ լինիմ յընչից (կողոպ- |
| դուք զարդարեմ                | տուիլ)                       |
| Ձարդարեմ 'ի զարգ գեղոյ. Տէս  |                              |
| 'ի գեղ:                      | Թաղաւորեմ թաղաւոր՝ 'ի թա-    |
| Ձարդարեմ 'ի զարգս պէսպէս     | ղաւոր                        |
| Տէս 'ի զարդ:                 | Թաղաւորեմ զթաղաւորութիւն     |
| Ձարդու՝ զարդուք զարդարիմ.    | Թաղաւորեմ 'ի թաղաւորու-      |
| Տէս Պաճուճանօք:              | թեան                         |
| Ձարմանամ զարմանալիօք՝ զար-   | Թաղաւորեցուցանեմ թաղաւոր՝    |
| մանա:                        | 'ի թաղաւոր                   |
| Ձարմանամ զարմացումն մեծ      | Թաղիմ զթաղումն իշոյ (ան-     |
| յոյժ                         | թաղ մնալ)                    |
| Ձգենում զգեստ                | Թափանցանց անգանեմ (թա-       |
| Ձգեցուցանեմ զգեստս           | փանցել)                      |
| Ձենում զենկա՝ զղենկիս } զոհ  | Թաքչեմ 'ի թաքստտան (պահ-     |
| Ձենում զենումն } ընել        | ուրալի)                      |
| Ձետեղեմ զտեղեաւն (տեղա-      | Թլխատիմ զթլխատութիւն         |
| ւորել)                       | Թլխատիմ 'ի թլխատութեան       |
| Ձինեմ զինուք                 | Թշուտութեամբ թշուտանամ       |
| Ձինուորիմ զգինուորութիւն     | Թուլութեամբ թուլեմ. Տէս Կա-  |
| Ձոհեմ զոհ՝ զզոհ՝ զոհս՝ զզոհս | խարդեմ:                      |
| Ձսէր սիրեմ. Տէս Սէր:         | Թուլութիւնս թովեմ            |
| Ձրկիմ գրկանս                 | Թուեմ զթիւս. Տէս Համարիմ:    |
| Ձօրաժողով լինիմ զօրօք լաղ-   | Թուիմ 'ի թիւ                 |
| մօք                          | Թուիմ 'ի թոխս                |
| Ձօրանամ զօրութեամբ յոյժ      | Ժամանակեմ ժամանակ            |
| Ձօրանամ զօրօք                | Ժամանակիմ 'ի մի ժամողրու-    |
| Ձօրանամ 'ի զօրութեան         | թիւն                         |
| Ձօրացուցանեմ զօրութեամբ      | Ժամէ 'ի ժամ տոնեմ զժամա-     |
| Ձօրացուցանեմ զօրութիւնս      | նակն (ատենն երկընցընել)      |
| Ըղձութիւնս ըղձանամ. Տէս      | Ժառանգեմ ժառանգութիւն՝       |
| Դիւթեմ:                      | զժառանգութիւն                |

Ժառանգեցուցանեմ Ժառան- Իրաւացուցանեմ իրաւունս՝ զի-  
 դուքիւն րաւունս  
 Ժառանգեցուցանեմ զժառան- Լալիւնս լամ  
 դուքիւնս Լամ զլալիւն մեծ  
 Ժառանգեցուցանեմ 'ի Ժառան- Լամ 'ի Լալիւն մեծ } սաստիկ  
 դուքիւնէ Լամ Լալիւն մեծ յոյժ } լալ  
 Ժողովեմ զԺողովուրդ՝ զԺողո- Լարարածին բաժանեմ  
 վուրդս Լիկեմ չարալուկ (չարաչար տան-  
 Ժողովեմ Ժողովս՝ զԺողովս (Ժո- Զիւ)  
 ղովորդեան) Լծեմ ընդ լծով (ծառայութեան)  
 Ժողովեմ 'ի Ժողով՝ 'ի Ժողովս՝ 'ի Լծիմ 'ի Լուծ (պահոց)  
 Ժողովուրդ Լնում Լրութեամբ (լեկեցուն  
 'ի բաժինս բաժանեմ, Տէս Բա- Ըլալ)  
 ժանեմ Լուսանայր Լուսով  
 'ի զեղ զարդու զարդարեմ, Տէս Լուսաւոր առնեմ զլոյս (զիտու-  
 Զարդարեմ 'ի զարդ- թեան)  
 'ի զարդ զեղեցիկ զարդարեմ Լուսաւորեմ զլոյս  
 Տէս Զարդարեմ 'ի զարդս Լուսով 'ի Լոյս Լուսաւորեմ, Տէս  
 'ի Թաւալ բանիցն Թաւալիմ 'ի Լուսոյ,  
 (խրթին խօսքեր ըսել) Լսելեօք Լսեմ, Տէս 'ի Լուր,  
 'ի Լուսոյ Լուսաւորեմ, Տէս Լու- Լսեմ զլուր՝ Լուր  
 սով Լրբութեամբ Լրբիմ  
 'ի Լուր ունկսն Լսեմ, Տէս Լը- Խաղ խաղամ  
 սելեօք, Խառնեմ զխառնակութիւն  
 'ի ծնէ կոյր ծնանիմ Խառնեմ 'ի խառնելիս (զգինի)  
 'ի կիբ կրեմ (քեռ կրել տալ) Խառնեմ 'ի խառնս, Տէս Յօ-  
 'ի կոր կորանամ տարախառնս,  
 'ի մեծամեծ հարուածս հարկա- Խառնեմ խառնելիս (ըմպելիք  
 նեմ, Տէս Հարկանեմ մեծամեծ, Լեցընել)  
 'ի չգոյէ զոյացուցանեմ (ստեղ-  
 ծել) Խարդախութեամբ խարդախեմ  
 'ի վեր վերանամ, Տէս Բարձ- Խափանեմ զխափանած  
 րանամ, Խելամտութեամբ խելամու  
 'ի ցնորս ցնորիմ, Տէս Ցնորս Լինիմ  
 Իմանամ զիմաստութիւն՝ Իմաս- Խեղութեամբ խեղեմ  
 տըս Խմբիմ զխումբս (զաւաճանիլ)  
 Իրագէտ՝ Իրագգած Լինիմ Իրաց տէս Գումարիմ,  
 (տեղեկանալ) Խնդամ զխնդութիւն, Տէս Ու-

|                               |                               |
|-------------------------------|-------------------------------|
| բախ լինիմ եւ Յնծամ            | կազմեմ կազմած. Տէս Հան-       |
| ննդամ 'ի վերայ խնդութեան      | դեր ձեմ.                      |
| ննդրեմ խնդիր՝ զխնդիր          | կախարդեմ կախարդանօք. Տէս      |
| ննդրեմ զվրէժխնայրութիւն. Տէս  | Թովչութեամբ.                  |
| Վրէժխնայիր.                   | կամ 'ի կայի (հաստատ կենալ)    |
| ննդրեմ խնդրուածովք            | կամ յաղօթս զաղօթս զւշտ. Տէս   |
| ննդրուածս խնդրեմ. Տէս Հայ-    | Աղօթիւք.                      |
| ցեմ.                          | կապանս կապեմ                  |
| նոստանամ զխոտու մն            | կապեմ 'ի կապանս՝ կապանօք.     |
| նոստովանիմ զխոտովանու-        | Տէս Զոսակապօք.                |
| թիւն. Տէս Դաւանիմ.            | կատարիմ զկատարութիւն. Տէս     |
| նոստովանութեամբ խոտովան       | Մոլեգնութիւնս.                |
| լինիմ                         | կատարեմ զկատարումն            |
| նորհիմ խորհուրդ՝ զխորհուրդ՝   | կարգեմ ըստ կարգի (կարգաւո-    |
| խորհուրդս՝ զխորհուրդս         | րել)                          |
| նորհիմ 'ի խորհուրդ՝ խորհրդովք | կարեւելք լինիմ 'ի վերս (սաս-  |
| նումբս խմբեմ (զաւտճանու-      | տիկ վիրաւորուիլ)              |
| թիւն ընել)                    | կարեւելք վիրաւորեմ            |
| նոստութեամբ խոսիմ             | կաքաւս կաքաւեմ. Տէս Պար.      |
| նրամատեմ խրամատութիւն՝        | կեամ զկեանս՝ կեանք անցը-      |
| զխրամատութիւն                 | կեանս կեամ. Ննել. Տէս Վարս.   |
| նրոխտումն խրոխտանամ. Տէս      | կեղծաւորանամ կեղծաւորու-      |
| Պարծանս.                      | թեամբ                         |
| նոսս խօսիմ. Տէս Բարբառիմ      | կերակրով կերակրիմ             |
| եւ ճառեմ.                     | կերպարանիմ 'ի կերպարանս       |
|                               | կթեմ զկուլթ՝ զկուլթս (այգե-   |
| Ծագեմ ծագումն                 | կուլթ ընել)                   |
| Ծախս ծախեմ                    | կիրս կրեմ. Տէս Կրեմ.          |
| Ծակեմ ծակ                     | կշռեմ 'ի կշիռս                |
| Ծանրացուցանեմ                 | կոթողս կոթողեմ                |
| Ծանրու-                       | կոծիմ կոծ մեծ՝ զկոծ մեծ. Տէս  |
| թեամբ                         | Աշխարեմ.                      |
| Ծառայեմ զծառայութիւն. Տէս     | Հարկ եւ Պաշտեմ.               |
| Հարկ եւ Պաշտեմ.               | կողմնադաս կամ կողմնց          |
| Ծեփեմ զծեփն                   | կոչեմ 'ի կոչումն՝ 'ի կոչունս. |
| Ծնանիմ ծնունդ՝ զծնունդ՝ ծը-   | կոտորեմ կոտորեմ               |
| նունդս                        | կոտորեմ կոտորմամբ սրոյ (թրէ   |
| Ծուփս ծփիմ                    | անցընել)                      |
| Ծրարեմ 'ի ծրարի               | կոտորեմ կոտորումն մեծ յոյժ    |

|                             |                              |
|-----------------------------|------------------------------|
| (սաստիկ ջարդ ընել)          | Հարկանեմ զհարուածս (Թշնամ-   |
| կործանիմ 'ի կործանումն ան-  | ւոյ)                         |
| հնարին                      | Հարկանեմ 'ի հարուածս անհը-   |
| կործանիմ կործանումն մեծ     | նարինս                       |
| կորնչիմ զյաւիտեհնական կո-   | Հարկանեմ հարուածօք մեծօք     |
| րուսան                      | Հարկանեմ մեծամեծ հարուա-     |
| կորուսանեմ կորստեամբ մեծաւ  | ծովք. Տէս 'ի մեծամեծս        |
| կորստեամբ կորնչիմ           | Հարկս հարկանեմ (տուրք տալ)   |
| կուտեմ կոյտս կոյտս՝ կուտոյս | Հարուս հարուածս մեծամեծս     |
| (ղէզ զէզ բարդել)            | յոյժ. Տէս Մեծամեծս           |
| կտուտս՝ կտտանս՝ կտտանօք     | Հարցանեմ հարցուած մի՝ հար-   |
| կտտեմ (չարչրկել)            | ցուած՝ զհարցուածս            |
| կրեմ զկիրս, Տէս կիրս        | Հարցուկս հարցանեմ (վհկու-    |
| կրկին բեկմամբ բեկանեմ, Տէս  | Թիւն ընել)                   |
| բեկանեմ բեկումնս            | Հարցումն հարցանեմ            |
|                             | Հաւատամ 'ի հաւատս՝ զհաւա-    |
| Հալածանօք հալածիմ           | տըս                          |
| Հալածեմ 'ի հալածանս         | Հաւատով հաւատամ              |
| Հաճիմ ընդ հաճութիւնս        | Հերկեմ հերկս. տես Վարս       |
| Համարիմ զհամարս             | Հիւանդանամ 'ի հի-            |
| Համարս համարիմ              | ւանդութիւնս } Տէս            |
| Համբառնամ 'ի բարձունս (զա-  | Հիւանդանամ հիւան             |
| չըս՝ զձեռս). Տէս Ամբառնամ   | դութիւն } նամ եւ             |
| Համբարեմ համբարս            | Հիւանդութեամբ հիւանդացու-    |
| Համբուրեմ 'ի համբուրից (բե- | ցանեմ                        |
| րանոյ)                      | Հիւսեմ հիւսմամբ              |
| Հայցեմ զհայցուածս. Տէս կնդ- | Հմայեմ հմայս. Տէս Յուսութս   |
| րուածս                      | Հնազանդիմ հնազանդութիւն      |
| Հանդերձեմ զհանդերձանս. Տէս  | Հնարիմ հնար՝ հնարս, Տէս Պա-  |
| կազմեմ                      | ճարս                         |
| Հաստատեմ հաստատութեամբ      | Հնարիւք հնարեմ՝ հնարիմ       |
| Հատ հատաւ (կտոր մը փրթաւ)   | Հնձեմ հունձ՝ հունձս՝ զհունձս |
| Հատակսոր կոտորեմ            | Հողամ՝ զհողս (հողոցն)        |
| Հատուցանեմ հատուցումն՝ ըզ-  | Հողս հողամ                   |
| հատուցումն                  | Հովասուն անանիմ              |
| Հարեւանցի անցանեմ           | Հոտոտիմ հոտ՝ զհոտն (հոտուը-  |
| Հարկ հարկանեմ. տես Մառա-    | տալ)                         |
| յեմ եւ Պաշտեմ               | Հոտոտիմ 'ի հոտ (անուշից)     |

|                                               |                                                                                            |                       |
|-----------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------|-----------------------|
| Հստանս հստիմ (խեղկատա-<br>կութիւն ընել)       | Մեծանամ մեծութեամբ                                                                         | } <i>հոգեբ. տո</i>    |
| Հրկիզեմ հրով. Տէս Այրեմ:                      | Մեծանամ մեծութիւն մեծ                                                                      |                       |
|                                               | Մեծանամ մեծութիւն յոյժ                                                                     |                       |
| Ձաղանօք ձաղիմ (խայտառակ-<br>ուիլ)             | Մեծանամ զմեծութիւն (դործոյ<br>բարեաց)                                                      |                       |
| Ձեռակապօք կապեմ. Տէս Կա-<br>սեմ:              | Մեծապատիւ մեծապարզեւ մե-<br>ծարեմ                                                          |                       |
| Ձուլեմ ըստ ձուլածոյ                           | Մեծապատիւ մեծարիմ                                                                          | } <i>չատ<br/>պատ-</i> |
| Ճայթէ ճայթիւն                                 | Մեծապէս մեծարիմ                                                                            |                       |
| Ճաշակս ճաշակեմ                                | Մեծարանօք մեծարիմ                                                                          |                       |
| Ճառեմ զճառս, Տէս Բարբառիմ<br>եւ Խօսս:         | Մեծութեամբ մեծացուցանեմ                                                                    |                       |
| Ճարտարասլետեմ ճարտարա-<br>պետութեամբ          | Մեղանչեմ մեղս՝ զմեղս. Տէս<br>Յանցանեմ:                                                     |                       |
| Ճգնիմ զճգնութիւն. Տէս Նեղիմ                   | Մեղուցանեմ մեղս մեծամեծս                                                                   |                       |
| Ճեմեմ 'ի ճեմելիս (զբօնելով<br>ժուռ գալ)       | Մեղանիմ զմահ՝ մահուամբ                                                                     |                       |
| Ճեպով տաղնապաւ ճեպիմ. Տէս<br>Փութով:          | Մեղանիմ սատակամահ<br>Մեղուցանեմ 'ի մահու<br>Մեղաւորեմ զմեղաւորութիւն<br>Միտիմ 'ի միտակողմն |                       |
| Մահ՝ մահու՝ մահուց մահս մե-<br>ռանիմ          | Մխիթարիմ զմխիթարութիւն<br>Մխիթարիմ 'ի վերայ մխիթա-<br>բութեան                              |                       |
| Մանրահետեմ մանր (կրկտել<br>պրպտել)            | Մխիթարիմ մխիթարութեամբ<br>Մկրտեմ մկրտութիւն՝ 'ի մկր-<br>տութիւն                            |                       |
| Մանրեմ մանր                                   |                                                                                            |                       |
| Մատենապրեմ զլիլիս                             |                                                                                            |                       |
| Մարտիւ մարտնչիմ. Տէս Պա-<br>տերազմաւ          | Մկրտիմ 'ի մկրտութիւն՝ զմկր-<br>տութիւն                                                     |                       |
| Մարտնչիմ զմարտ Տէս Պա-<br>տերազմիմ            | Մկրտութիւն մկրտիմ<br>Մոլեղնութիւնս մոլեղնիմ. Տէս<br>Կատաղիմ:                               |                       |
| Մարտնչիմ զմարտս պատերազմի                     |                                                                                            |                       |
| Մասնչիմ 'ի մարտս պատերազ-<br>մաց              | Մոլորիմ ըստ մոլորութեան<br>Մոլորիմ 'ի մոլորութեան                                          |                       |
| Մեծ հարուածս հարկանեմ                         | Մոլորութիւն՝ մոլորութիւնս<br>մոլորիմ                                                       |                       |
| Մեծամեծ հարուածովք հար-<br>կանեմ. Տէս Հարում: | Մորթեմ զմորթ (մորթն հանել)                                                                 |                       |
| Մեծազնի գնեմ                                  | Մտանեմ զմուտ                                                                               |                       |

|                                     |                                         |
|-------------------------------------|-----------------------------------------|
| Յաղթեմ զյաղթութիւն                  | Նախանձեցուցանեմ 'ի նախանձ'              |
| Յամսն ամանամ (ամանի մէջ<br>լեցընել) | զնախանձ<br>Նախանձու նախանձիմ            |
| Յաղնութիւնս յանդիմ                  | Նախատինս նախատեմ                        |
| Յանցանեմ զանհարին յանցանս           | Նեղեմ զնեղութիւն                        |
| Յանցանեմ զյանցումն                  | Նեղիմ նեկութիւն. Տէս ձգնիմ:             |
| Յանցանեմ յանցանս. Տէս Մե-           | Նեղութիւն նեղաձիգ լինիմ (նեղ<br>ղանչեմ: |
| Յանցանեմ յանցութիւն յանցա-          | Նեղութիւն նեղութիւն. Տէս Անիծիւք:       |
| նաց                                 | Նիւրհեմ զնիւրհս (մրափել)                |
| Յարձանազրի զրեմ                     | Նիւթեմ զնիւթս չարեաց (չա-               |
| Յարութեամբ յարուցանեմ               | րիք մտածել)                             |
| Յաիշտակեմ յաիշտակութիւն             | Նիւթեմ նիւթ արդարութեան                 |
| զյաիշտակութիւն                      | Նկարեմ 'ի նկարու' նկարագիւր             |
| Յաիշտակեմ յաիշտակութիւնս            | Նմանեցուցանեմ նմանութեան                |
| զյաիշտակութիւնս                     | Նմանութիւն նմանեցուցանեմ                |
| Յաիշտակութեամբ յաիշտակիմ            | Նորաձեւ ձեւսնամ                         |
| Յիշեմ զիշատակ                       | Նորաձեւս ձեւեմ                          |
| Յոտն կամ 'ի վրայ օտից               | Նորոգիմ 'ի նոյն նորոգումն               |
| Յորդեգիրս զրեմ (որդեգրել)           | Նորոգիմ 'ի նորոգութիւն                  |
| Յուսութիւն յուսիմ. Տէս Հմա-         | Նուաղեմ զնուաղարանս (նուա-              |
| յեմ:                                | ղարան զարնել)                           |
| Յուսով յուսամ                       | Նուաղս նուաղեմ. Տէս Երգեմ:              |
| Յօժարութեամբ յօժարիմ                | Նուէր նուիրեմ. Տէս Պարգեւեմ             |
| Յօժարախառնս խառնեմ. Տէս             | Նուիրեմ զնուէր' նուէրս' զնու-           |
| խառնեմ:                             | էրս:                                    |

(Շարալարելի)

Յ. Վ. Մխիթարեան

ՊՈՒԿՈՅԻ ՆՐԻՅՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՒ ՀԻ ՄՈՂՆԻԳԱՅԻ



ՅԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐԻԿԵԱՆ

(Շարունակութիւն) (\*)

Սրբաւնի Մոնիգա այս բաներն փորձառութեամբ սորված հասկըցած էր. անոր համար ալ այս զփուարին եւ ներքին վերաց նկատմամբ զարմանալի է յաջողակութիւնը. եւ առ այս կը դորձած էր իւր բնական քաղցրութիւնը, փափուկ զգուշութիւնը, հեռատես եւ լուսարձակ հանճարը:

Ահաւասիկ ասոնք են իւր եղբայրսիրական գործոց մէկ քանին: Այսու հանդերձ կուզայ անդադար կազմուիլու հոգին սիրոյ եւ զոհից միշտ կենդանի եւ անսպառ աղբերէն, առ Տէրն մեր Յիսուս Բրիսառս, ներկայ սուրբ սեղանոյն վրայ, ամէն անգամ որ իւր բարեգործութեանցը մէջ յովնածութիւն մը զգար. եւ ինչպէս չի յոգնի այնքան բազմաթիւ եւ անձնանուէր գործոց մէջ, երբ՝ նոյն իսկ զուարճալի եւ հաճոյական զրօսանաց մէջ մարդ կը յովնի:

Թէ որ մէկը առաւօտուն կամ իրիկուն մտնալու ըլլար Թաղատայի եկեղեցւոյն մէջ, հոն անվրէպ պիտի տեսնար սրբաւնին, հաւանականաբար եկեղեցւոյն այն անկիւնը՝ զորն որ պզտիկութեանը ժամանակ շատ կը սիրէր, ամփոփ մօռք աղօթելով, եւ կենդանի հաւատքին եւ աստուածսիրութեան նշոյլ մը շողալով արցունքներէ փորուած գեղեցիկ եւ տփոյն երեսին վրայ: Աւ հասարակ ժամասացութեան ժամերէն զատ՝ օրը երկու անգամ ալ կանոնաւոր կերպով եկեղեցի կուզայ եւ երկայն

(\*) Տե՛ս Պատկեր 2. Տարէ ԲԷ- 4:

ժամեր կ'աղօթէ. եւ այն այցելութեանց ատեն սուրբ Դիւքը ձեռքէն չձգեր, մանաւանդ սաղմոսարանը, զորն որ իւր ար-  
ցունքներովը կը թրջէր: Սրբոց՝ եւ ի մանաւորի մարտիրոսաց  
համար փափուկ ջերմեռանդութիւն ցոյց կուտայ. շատ անգամ  
անոնց դերեղմաններուն կամ իրենց զիւցաղնական գործքերովը  
հոգակուած տեղուանքը ուխտի կ'երթայ: Նոյն ատենուան սո-  
վորութեան համաձայն մարտիրոսաց տօնախմբութեան օրերը  
ինքն ալ անոնց խորանը իւր պղտիկ կողովը կը տանի, որուն  
մէջ հաց՝ ղինի եւ միս կը զանուի. կողովը դերեղմանի վրայ  
դնելէն վերջը, նախ ինքը մէջինէն քիչ մը կը ճաշակէ, որով  
սրբոց արդեանց եւ առաքինութեանց սփանկով կը մասնակցի,  
յետոյ մնացած ընծաներէն ալքատաց կը բաժնէ, զգուշանալով  
որ տեղի չտայ այն անկարգութեանց որ սկսեի էին սպրդիլ այն  
հին եւ խորհրդաւոր սովորութեան մէջ, եւ որն որ քիչ վերջը  
նոյն պատճառաւ բոլորովին պիտի արգիլուէր: Արդ որ մայրս  
կը տանէր իւր կողովը մարտիրոսաց դերեղմանը, կ'ըսէ սուրբ  
Սրտախնոս, լի սգաւոր նուէրներով, զատոնք աղքատաց կը բաժ-  
նէր, իրեն քանի մը կաթիլ ղինի պահելով՝ այնչափ միայն որ-  
չափ որ սրբոց յիշատակաց պատիւը կը ներէր իւր վերջին ծայր  
ժուժկալութեան: Եթէ մի եւ նոյն օրը այլ եւ այլ սրբոց տա-  
րեղարձը հանդիպելու ըլլար, ան ատեն իւրաքանչիւրոյն գերեզ-  
մանին վրայ ալ պղտիկ չիւ մը ղինի կ'ընծայէր՝ ջրախառն եւ  
զառջ, զորն որ յետոյ իրենիններուն հետ կը խմէր, աւելի իւր  
բարեպաշտութիւնը՝ քան թէ հաճութիւնը գոհացնելով:

Ամէն առաւօտ պատարագի ներկայ կը գտնուի եւ խորին  
յարգութեամբ եւ փափուկ ջերմեռանդութեամբ կը հաղորդուի.  
սուրբ սեղանին առջեւ եւ աղօթիցը մէջ Աստուած կը ճոխա-  
ցընէ զանիկայ մեծամեծ շնորհքներով, ընդունած է մանաւանդ  
արտասուաց շնորհքը. յաճախ անգամ աղօթելու ատեն մտօք  
կը յափշտակուի, մանաւանդ Փրկագործութեան յիշատակը եւ  
կեղեցւոյն կատարած օրերը. բայց ամէն խորհուրդներէն աւելի  
Տեառն Մերոյ չարչարանաց յիշատակը կը յափշտակէ ղինքը.  
զՅիսուս Բրիստոս խաչի վրայ քամուած նկատելուն պէս՝ սիրտը  
չլիմանար: Մանաւորապէս օր մը՝ երբ եկեղեցւոյ մէջ՝ փըր-  
կագործութեան խորհրդոյն վրայ կը մտածէր, ուղիւով խնջ  
հասցընել Մեր Փրկչին չարչարանքներէն բղխած այն անհուն  
բարեաց վրայ, Աստուած նոյն ատեն այնպիսի տառաշնորհ  
լուսով եւ սիրով կը լեցընէ ղինքը՝ որ աչքերէն արցունքները

հեղեղի պէս կ'սկսին վազել, եւ զգալով որ մարմրուկ կուգայ վրան, կ'աճապարէ կ'ելլէ եկեղեցիէն՝ ուղեւով ծածկել այս ընդունած շնորհքը, բայց չատ ուշ, վասն զի աղբիւրի պէս վազող արտասուքը կը տեանան, կը փութան բոլորտիքը կը ժողովն եւ զինքը մխիթարելու կ'ըսկսին, կարծելով որ այն արտասուաց պատճառը իւր ամենօրեայ ցաւերն են, բայց ախտն ինչ կըրնան ընել մարդիկ այնպիսի պարագաներու մէջ. իւր սիրտը անանկ խորին վէրք մը ընդունած է որ՝ ինչպէս երբեմն Աստուած կը շնորհէ ընտիր անձանց, արցունքները փոխանակ ցամաքելու՝ աւելի եւս յորդանոս կը վազեն:

Սրբուհի Մոնիգայի վարուց այս եղանակին մէջ վերոյիշեալ դէպքը միայն մինչեւ առ մեզ հասած է. սակայն ինչ ընդարձակ հորիզոն մը չքանար մեր տեսութեանը առջեւը. ինչ առաքինութիւններ չենթադրեր. ինչ սերտ միութիւն մը իւր Արարչին հետ. ուստի որչափ դառն կսկիծ է մեզի որ սոյնօրինակ գեղեցիկ կեանք մը չենք կարող ուզածնուս պէս մտնրամտնաբար նկարել. եւ քանի որ պատմութեանս մէջ առաջ չի դիմենք, նոյն կսկիծը ստէպ անգամ պիտի ունենանք. երբ՝ օրինակի ազագաւ մեր որբուհւոյն իւր աղօթիցը մէջ զգացած հրաշալի յոյզերը պիտի փնտռենք՝ ո՞ւր պիտի դռնանք. իւր մահացումանց եւ ապաշխարութեանց մանրապատում պատմութիւնը, աշխարհքիս համար ունեցած ատելութեան բարի ըզգացմունքներն, եւ ընտանեկան յարկին ամենախոնարհ առաքինութիւնները եւ ընկերսիրական զիւցաղնութիւնները՝ ո՞ւր են. կարծես թէ Աստուած կամովին ծածկած է Մոնիգայի թուր վարքը. իւր սողայութեան ամուսնութեան՝ եւ աղքատաց տուած խնամոց սիրուն դէպքերը, որպէս զի սոսկ անոր մայրութեան զարմանալի տեւարանին հանդիսատես ընէ զմեզ:

(Շարայարեյի)

ԱՌ ԶԵՌՆ

ԲԱՌԱԳԻՐՔ

ԼԱՏԻՆԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

Ի ՊԷՏԱ ԴՊՐՈՑԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Տ ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՄԻՍԲԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՅՈՒՐԲԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ  
ԵՒ Ի ՀՈՌՎԱՐԷԱԿԱՆ ԿՂԵՐԱՆՈՑԻ

Ի ՀՈՌՎԱՐ

Ի ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս. ԺՈՂՈՎՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱԻԱՏՈՅ

1893 — ՌԵԽԲ

ՊԱՏԿԵՐ տառն է. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի

Բաժանորդագրութեան տարեկան գինն է  
Կ. Պօլսոյ համար . . . . . 40 դանեկան  
Գաւառաց եւ օտար երկիրներու համար  
բոքատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

## *Խորաքանջիշր թիշ 2 դահեկան*

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւշիլ փողոց  
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ թերթին  
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1